Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Ծաղկունք բաց դպրոց>> հիմնադրամ

Թեմա՝ _ /Հեքիաթները/ գրական նյութը ,որպես հաղորդակցության զարգացման անփոխարինելի միջոց, հեքիաթի ուսուցում:

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Թագուհի Պապոյան

2023

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. Հեքիաթը և դրա ուսումնասիրումը տարրական դպրոցում

Գլուխ 1.1 Հեքիաթների կրթական ազդեցությունը տարրական դպրոցում անձի ձևավորման գործում

Գլուխ 2. Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ /դերախաղ և արտահայտչամիջոցների օգտագործում/Գլուխ 2.2 Հագործակցային աշխատանք Հետազոտական աշխատանք

Եզրակացություն

Օգտագործված գրականություն

Հեքիաթները ժողովրդական բանահյուսությանամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են։ Դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում։Սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և իրենց անմիջականությամբ , պարզությամբ, լավատեսությամբ ու գրավչությամբ հուզել է ընթերցողներին։ Հայ ժողովրդական հեքիաթների մի զգալի մասը հյուսվել է ազգային –ստեղծագործական հիմքով և տարբերվում է ուրիշ ժողովուրդների հեքիաթներից լեզվով, կյանքի, կենցաղի, բնության նկարագրով ու հերոսների հոգեկան կերտվածքով։Դարեր շարունակմայրիկներն ու տատիկները հեքիաթների միջոցով

փոքրիկներին ներարկել են սեր, բնության, մարդու, հայրենիքի, կենդանիների ու թռչունների նկատմամբ։

Արդեն մի քանի տարի է մեզ մոտ հեքիաթները ընթերցում են տատիկները։Երեխաները մեկնաբանում են , վերլուծում են, բեմականացնում են։<<Հազար ումի հեքիաթը>> Ծաղկունքում ծրագրի շրջանակում շարունակվում է հեքիաթի ուսուցումը։Հեքիաթը նպաստում է մանկան երևակայության խթանմանը, հետաքրքրասիրության զարգացմանը և ընթերցասիրության մշակմանը։Ինչպես ասել է Հ.Թումանյանը <<Հեքիաթներում անդունդներ են խորը, անծայր, անվերջ։ Հեքիաթը հարուստ և շքեղ աշխարհ է։ Դպրոցական տարիքի երեխաների մոտ շատ կարևոր դեր է կատարում հեքիաթը։Ժամանակակից կրթական համակարգինպատակներից մեկն է երեխային տալ այնպիսի կրթություն , որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել, այլ ձեռք բերել ինքնուրույն մտածելու և գործելու կարողություններ և հմտություններ, անկաշկանդ արտահայտվելու հնարավորությունկընձեռնի և այդ հմտություններն ու կարողությունները կկիրառի գործնականում։ Շատ երեխաներ հեքիաթներ չեն սիրում պետք է այնպեսանել , որ երեխան մտնի դրա մեջ, ինքն էլ մասնակցություն ունենա, վերարտադրի իր ձևով,

բեմականացնի , որ իր համար հետաքրքիր լինի։

Պետք է թույլ տալ, որ երեխան ինքնաարտահայտվի, որի արդյունքում կբացահայտվի նրա ընդունակությունների և կարողությունների սահմանները, ցանկությունները։ Հեքիաթը կարդալուց հետո պետք է երեխաներին թույլ տալ , որ իրենք քննարկեն, վերլուծեն և ինչու ոչ բանավիճեն հերոսների լավ ու վատ լինելու շուրջ։

Գլուխ 1. Հեքիաթը և դրա ուսումնասիրումը տարրական դպրոցում

Ինչպե՞ս ուսուցանել, որ երեխաները սիրեն կարդալ։

Ինչպե՞ս սովորեցնել երեխաներին մտածել և տրամաբանել։

Երեխան պետք է ապրի հերոսի կյանքով, հանդես գա հերոսի դերով, կխոսի, կմտածի ինչպես նա։

Հեքիաթները գրավում են երեխաներին իրենց անսահմանափակ հնարավորություններով, բարձր բարոյականությամբ, լավատեսությամբ, արդարությանզգացողությամբ և ամենակարևորը բարու հաղթանակով և ընդդեմ չարի։ Հաճախ երեխան ոչ միայն ընդունում և լսում է հեքիաթը, այլև ինքն է ստեղծում այն և ապրում իր ստեղծած հեքիաթում։ Մանկության տարիներին բոլորն էլ լսում են հեքիաթներ, հաճախ առանձնացնում իրենց համար սիրելի հեքիաթների հերոսներին, ըմբռնում են բարու և չարի հասկացողությունները։

Հեքիաթի մասին գիտելիքների ճանաչումը նպաստում է երեխաների ճանաչողական հետաքրքրություններիձևավորմանն ու զարգացման։Կրտսեր տարիքում ուսուցման նպատակը երեխաներին այնպիսի կարողություններով ու հմտություններով զինելն է, որոնք կնպաստեն նրանց ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելուն։Տարբեր մարդիկ տարբեր մտավոր կարողությունների տեր են, որոշների մոտ այն բավական լավ զարգացած է, իսկ ոմանց մոտ ավելի թույլ, սակայն բոլորի մոտ էլ հնարավոր է գտնել այն ուղին որը կկարողանա նրանց տանել բարձունքներ։ Պետք է ուսուցումը այնպես կազմակերպել, որ հեքիաթների ընթերցումը դառնա նոր ձեռքբերումների գործընթաց։ Երեխաների մոտ տեղի է ունենում մտավոր կարողությունների զարգացում, որը նպաստում է հեքիաթների նյութի ամբողջական ընկալմանը, ինչպես նաև այն տարբեր կողմերից դիտարկելու և վերլուծահամադրական

աշխատանքներ իրականացնելու հմտությունները։Կրտսեր տարիքում հեքիաթներիմասին նախագիտելիքներ հաղորդելը նախապատրաստում է հետագա ուսուցման ընթացքում խորացնելու իրենց գիտելիքներն այդ ուղղությամբ և պատրաստ լինելու նոր գրականստեղծագործությունների ուսումնասիրության համար;Արդյունավետ ուսուցման և աշակերտների գիտելիքների խթանման ուղղությամբ ողջ աշխարհում,ինչպես նաև Հայաստանում, կան բազում խնդիրներ։Երեխաների շրջանում կորել է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, գրեթե չեն շփվում բավարար չափով չեն շարժվում, չկա ֆիզիկական ակտիվություն և այլ։Այս խնդիրների դրական լուծումների վրա իրենց ոչ պակաս ազդեցությունն են ունենում հեքիաթները։Հեքիաթները կրտսեր դպրոցականի աշխարհ մտնումեն դեռ վաղ տարիքից և մտնում են որպես իրականություն։ Երեխան հավատում է հրաշքների։ Հեքիաթները գրավում են երեխային իրենց անսահմանափակ հնարավորություններով, բարձր բարոյականությամբ, արդարության, զգացողության բավարարմամբ։

Գլուխ 1.1 Հեքիաթների կրթական ազդեցությունը տարրական դպրոցում անձի ձևավորման գործում։

Հեքիաթը մեծ ազդեցություն է ունենում բոլոր տարիքի

երեխաների անձի ձևավորման գործում։ Հեքիաթիուսուցման ընթացքում զարգանում է երեխայիմտածողությունը, զգացմունքներ են առաջ գալիս ,երեխան ցուցաբերում է տարաբնույթ վարք, որի ընթացքում ձևավորվում է

երեխայի անհատականությունը։ Ժողովրդական հեքիաթները բարձրացնում են երեխայի ճանաչողականությունը, ձևավորում են հոգևոր և բարոյական հայացքները։Հեքիաթի դերը երեխաների զարգացման գործում բազմազան է սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում։ Հեքիաթը երեխաներին կյանք սովորեցնելու, չարի ու բարու մասին պատմելու ամենամատչելի տարբերակն է։ Երեխաները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը։ ՈՒսումնասիրությունները ցույց են տվել որ այն երեխաները, ում փոքր հասակից հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ և սահուն արտահայտել։ Կարևոր է այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի

զգացմունքային և պատկերավոր

Պետք է հիշել որ ցանկացած հեքիաթ իր ուրույն ազդեցությունն է ունենալու երեխայի վրա , լինի բացասական , թե դրական։ Յուրաքանչյուր հեքիաթի մեջ կարելի է գտնել ուրախություն, տխրություն, բարություն, չարություն, իմաստություն, արիություն, հավասարակշռություն, արդարամտություն, ընկերասիրություն։

Ընտրված հեքիաթների շարքում պետք է լինեն

1.Ժողովրդական բանահյուսությունից/ ժողովրդական ծեսեր, սովորություններ, հավատալիքներ։Այն շատ մեծ դեր է խաղում դպրոցականի զարգացվածության գործում։Ժողովրդական բանահյուսությունը ոչ միայն կատարելագործում է երեխայի բանավոր խոսքը, այլև ծանոթացնում է դաստիարակության նորմերին։ Որպիսի մատչելի և հասանելի լինի յուրաքանչյուր դպրոցականի, այն ուսուցանվում է խաղերի , երգերի, հեքիաթների և հանելուկների միջոցով։ Այդ աշխարհը շատ լուսավոր է և արտահայտիչ, որի շնորհիվ էլ հետաքրքիր է երեխաների համար։

2.Արձակ ստեղծագործություններից, որոնք օգնում են դպրոցականին շփվել և հարաբերություններ ստեղծել ինչպես իր տարեկիցների , այնպես էլ մեծահասակների հետ։ Դրա շնորհիվ երեխաները իմանում են, թե ինչ է մեծահոգությունը, խիղճը , պատասխանատվությունը, հերոսականը։

3.Գրական հեքիաթներից որոնք հասկացնում են, որ կյանքում լինում է ոչ միայն բարին ու մայրիկի սերը այլ այս կյանքում իրենց ուրույն տեղն ունեն չարը, հիվանդությունը, ատելությունը, սակայն բարին ձգտում է միշտ պայքարել չարի հետ և հաղթել։

4.Առասպելներից և էպոսներից, որտեղ երեխաները հիանում են հերոսներով , համակվում են քաջության հերոսության անկողմնապահության զգացումով,

հայրենիքի հանդեպ լցվում են անաչառ սիրով։ Մեր

կողմից առաջադրված հեքիաթների համախմբման արդյունքում երեխաների մոտ ձևավորվում են այնպիսի անձնային հատկանիշներ, ինչպիսիք են բարոյականությունը, կարեկցանքը ուշադրությունը մյուսների նկատմամբ, համեստությունը։ Հեքիաթների այսպիսի համալիր ընտրությունը պատասխանում է բոլոր նշված խնդիրներին, դաստիարակում է հայրենասիրություն, քաջություն, պատասխանատվություն, բարություն, հոգատարություն, պարկեշտություն։ Թերապևտիկ հեքիաթները սովորաբար հիշեցնում են ժողովրդական կամ հայտնի հեղինակների հեքիաթներ, իսկ երբեմն էլ դրանք գրական մեծ նշանակություն չեն ունեում, քանի որ շատ ավելի պարզ են և հասարակ։

Սակայն անկախ իրենց պարզությունից և բովանդակությունից, թերապևտիկ հեքիաթներըձգտում են օգնել երեխաներին իրենց ներքին աշխարհը կարգավորելիս։ Թերապևտիկ հեքիաթների մոգական ուժը պայմանավորված է նրանով , որ երեխաների կողմից այն ընկալվում է միաժամանակ երկու մակարդակով՝ գիտակցական և ենթագիտակ- ցական։

Գիտակցական մակարդակը հեքիաթն ընկալում է այնպես, ինչպես որ այն կա, այսինքն՝ երեխան հա- ղորդակից է լինում հեքիաթային հերոսների ցավին, մտածում է, որ միևնույն է այն իր մասին չէ, իսկ են-թագիտակցական մակարդակը <<հավատում է >> իր լսածին և տալիս է վարքի փոփոխման համապատաս-խան ծրագիր՝ վերակարգավորում է արժեքները, հա-յացքները և դիրքորոշումը։Շատ կարևոր է, երբ երեխան նույնացվում է հերոսների հետ, համեմատում է հեքիաթի սյուժեն իր կյանքի հետ, ինչպես նաև ձեռք է բերում փորձ կամ հասկանում է

Հեքիաթում թաքցված հաղորդագրությունը՝ Հեքիաթի

որևէ ուշագրավ պահին կարագրումը կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երևակայությամբ վերապրել հեքիաթի բովանդակութ- յունը ։ Այստեղ պարզ է, որ խոսքի ու գույների արվեստի միաձուլում է տեղի ունենում ։ Սա էլ ուսուցման արդյունավետությունը բարձրացնող կարևոր հանգամանքներից է։

Ուսուցիչը խոսում է հեքիաթի մասին , այնուհետև երեխաներին հայտնի հեքիաթներից ներկայացվում են մի քանի երկխոսություններ։ Երեխաները փորձում են ըստ երկխոսությունների կազմել հաղորդակցություն-ների սխեմաներ և քարտեզներ։

Առաջարկվում է կառուցել բուրգ՝ հետևյալ ձևով.

1. Հեքիաթի հեղինակը
2. Գործող անձի անունը
3. Որտեղ է նա գտնվում
4. Առաջին դրվագը
5. Երկրորդ դրվագ
6. Երրորդ դրվագ
7. Հանգույցի լուծում

Ուսուցիչը պետք է օգնի երեխային , որպեսզի նրա համար տեսանելի դարձնի հեքիաթի կառուցվածքը և իրադարձությունների հաջորդական ընթացքը։

Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ

ժամանակակից հեքիաթների դերը կրտսեր խմբում կրթության, հոգևոր և բարոյական աշխարհում անգնահատելի է։ Այս հեքիաթները ստեղծվել են որոշակի ռիթմով, որով դասավորվում են երեխաների մտքի կարողությունները, ըստ՝ ընկալումների։ Ռոդարին հոգատարությամբ պահպանել և սիրով սերունդներին է փոխանցել, ոչ միայն հեքիաթիսյուժեն, այլև իրեն բնորոշ ոճը, խոսքն ու լեզուն, թևավոր խոսքերն ու բարքերը։ Հեքիաթի լեզուն հարուստ է աֆորիզմներով, կրկնություններով, շատ ուսուցողական է, որը բարձրացնում է երեխաների ոգին, դիպչում նրանց հոգու լարերին։

Հեքիաթների դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսվում է երևակայության զարգացումից, որին հաջորդում է ճիշտ խոսքի ձևավորումը։ Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով սովորեցնում է կյանք։ Հեքիաթի ուսումնասիրութ- յունն իրականացվում է ինչպես պատմվածքինը,այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործութ-յուն։ Սա նշանակում է՝ հեքիաթի ունկնդրումը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ։

Կրտսեր փոքրիկներն ուզում են հավատալ հեքիաթում ունեցող դեպքերին՝ <<կախարդական

գավազանի>> գոյությանը թռչող ձիերի, ցախավելի,

գորգի հզորությանը և այլն։Նրանք հիանում են հեքիաթների բարի հերոսների հաղթանակներով , հնարամտությամբ և ձգտում են նմանվել նրանց՝ լինել բարի, արձագանքող , ապրումակցող, արդար և ազնիվ։ Սա է հեքիաթի ուժը, որի բացահայտումով էլ պայմանավորված է նրա բարոյադաստիրակչական կողմը։ Այս խնդրի լուծումը ևս պետք է <<բռնի>> պարտադրող բնույթով, երեխայի վզին փաթաթող ոճով չկազմակերպվի։

Հեքիաթը կկորցնի իր ազդեցությունն ու համոզիչ տպավորությունը, եթե մենք փոքրիկներին շինծու , կեղծ ճանապարհով բերենք եզրակացության։Դաստիարակն իր կատարած աշխատանքի մեջ պիտի վստահ լինի՝ հասա՞վ արդյոք իր նպատակին.ծագե՞ց

արդյոք երեխաների մեջ հեքիաթի հերոսների նկարմամբ

սեր, փայլեցի՞ն արդյոք երեխաների աչքերը, նրանց զգացմունքային, բարոյակամային աշխարհը հարստացա՞վ։ Այդ դեպքում երեխաներն իրենց պարզ լեզվով և անկեղծ ու անմիջական դատողություններով կասեն, թե ինչ սովորեցին հեքիաթի հերոսներից, որն է հեքիաթից ստացած գլխավոր դասը և այլն։

Հեքիաթն այն ստեղծագործություններից է, որը կարելի է ուսուցանել դերերով և բեմականացնել։ Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով խաղից առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, կերպարների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում, նրանց՝ որոշակի դեպքերում դրսևորած վարքի դիտարկում, ընտրովի խաղ։ Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը։

Ինչպես բոլոր երեխաները, այնպես էլ դպրոցական տարիքի երեխաները սիրում են ունկնդրել հեքիաթներ։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ դասվարը պիտի դասի ժամանակ նաև հեքիաթներ պատմի։ Նրա վառ ու տպավորիչ խոսքը կնպաստի, որ երեխաները ոչ միայն ստանան հեքիաթ պատմելու արտահայտչականությանմուշ, այլև զգան հեքիաթի լեզվի և ոճի հմայքը։ Այս

իմաստով շահեկան և նաև դերասանների կատարմամբ ներկայացվող հեքիաթների ունկնդրումը։

Հեքիաթի պատմումը կամ դերասանների կատարմամբունկնդրումը աչքի է ընկնում իր զգացմունքայնությամբ, խոսքի հստակությամբ և պատմողի դիմախաղերի պայծառությամբ։ Պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, դիմախաղերը օգնում են, որ երեխաներն ավելի ճիշտ և խորությամբ ըմբռնեն ստեղծագործության գաղափարը։ Կերպարների արարքներն ու խոսքը, և տպավորություններն ավելի պայծառ ու կենդանի լինեն։Առավել շահեկան է հեքիաթը պատմել ոչ սովորականպայմաններում՝ գորգի վրա շրջանաձև նստած, բարձերի վրա թիկնած, կոճղերի շուրջ հավաքված, խորհրդավոր

դեկորների և լույսերի առկայության պայմաններում և այ

այլն։

Նշենք, որ երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը։ Առավել ևս, օգտակար է հեքիաթի շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին։ Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների «կազմած» նկարներով պլանը։ Սա պատմելու կարողության ձևավորման առաջին փուլն է։ Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ

ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով, մրցութային և այլ եղանակներով։

Շահեկան է երեխաներին հանձնարարել՝ անգիր սովորել այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանել դրանք։

ԳԼՈՒԽ 2.2 Համագործակցային աշխատանք

Համագործակցային ուսուցման նպատակը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ անհատ դարձնելն է։ Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալտարրերը՝

.Դրական փոխկախվածություն

.Դեմ առ դեմ փոխազդեցություն

.Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն

.Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ

.Խմբային գործընթաց

.Փոխներգործում կամ ինտերակտիվ առաջադրանք

Համագործակցային ուսուցման ժամանակ գնահատումը պետք է ծառայի խմբում սովորողների համագործակցության խթանմանը: Համագործակցային աշխատանքում պետք է ընդգրկվեն խմբի բոլոր անդամները: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է գիտակցի, որ խմբի հաջողությունը պայմանավորվածէ բոլորի ակտիվ մասնակցությամբ:

Հետազոտական աշխատանք 1.

Դասի նմուշ — օրինակ

Դասի տեսակը՝ Հաղորդման դաս

Դասի թեման՝ «Թե ինչպես կապիկները ճանապարհորդեցին»

Դասի նյութը՝ կապիկներ

Դասի նպատակը՝

.Մշակել ն/դպրոցականի ստեղծագործական կարողությունները

.Զնավորել դատողություններ անելու և քննարկելու մշակույթ

կարողանան որոշել հեքիաթում նկարագրված իրադրությունների միջև եղած կապերը մշակել բովանդակության կառուցվածքի գծակարգ մշակելու կարողություն՝ նշելով սկիզբը, ընթացքը և ավարտը մշակել ստեղծագործաբար պատմելու և ինքնուրույն հեքիաթներ հորինելու կարողություն.

Դասի կահավորումը՝

.Դիդակտիկ նյութեր թեմայի շուրջ, քարտեր, պաստառներ կենդանիների նկարներով, դասագրքեր,տեսասահիկ, հարցաշարային քարտ նկարներով

Օգտագործվող մեթոդները՝

«Զրույց», «Հարց ու պատասխան», դերային խաղեր,խմբային աշխատանք

Դասի ընթացքը՝

Մինչ դասը սկսելը երեխաներին բաժանում եմ հարցերով քարտեր տարբեր հեքիաթների նկարներով՝ պարզելու

համար, թե նրանցից յուրաքանչյուրը ինչ հեքիաթներ է

սիրում և ինչ հետաքրքրություններ ունի։

Քարտերը ուսումնասիրելուց հետո երեխաներինների գրավել նախապատրաստական զրույցի շուրջ։ Զրույցը սկսում եմ հարցերով՝ օգտագործելով «Հարց ու պատասխան» մեթոդը։

Հարց 1.— Ի՞նչ կենդանիներ գիտեք։

Պատասխան – վագր, ձի, կով, փիղ, խոզ, ոչխար, գայլ, աղվես, շուն, արջը, առյուծ, փոկ, ընձուղտ, կապիկ…

Հարց 2.- Ձեր թվարկած կենդանիներից որո՞նք են ընտանի, որո՞նք վայրի։

Պատասխան – ընտանի են՝շունը, ձին, խոզը, կովը…,

վայրի են՝վագրը, արջը, գայլը, փիղը, առյուծը, փոկը, ընձուղտը, կապիկը…

Հարց 3.- Հեքիաթներում կամ մուլտֆիլմերում ի՞նչ հատկանիշներով է օժտված, ինչպիսին են լինում գայլը, խոզը, աղվեսը, արջը, շունը, առյուծը, փոկը, ընձուղտը, կապիկը…

Պատասխան – Չար գայլ, փնթի խոզ, խորամանկ աղվես, ծուռ թաթ արջ, հավատարիմ շուն, թագավոր առյուծը, թմբլիկ փոկը, բարի ընձուղտը, չարաճճի կապիկը…

Պատասխանները նկարների տեսքով փակցվում են։

Երեխաներին գովել և խրախուսել իրենց պատասխանների համար և ավելացնել.

-Կեցցե՛ք, երեխաներ։ Իսկ հիմա այն կապիկին, որին չարաճճի անվանեցիք, կտեսնենք ուրիշ կերպարի մեջ և ուրիշ տեսանկյունից։

Կարդում եմ «Թե ինչպես կապիկները որոշեցին ճանապարհորդել» հեքիաթը՝ դանդաղ, արտահայտիչ ձայնով, յուրաքանչյուր հերոսին տալիս եմ իրեն հատուկ ձայնային հնչերանգ։ Կարդում եմ երկրորդ անգամ՝ բացատրելով անծանոթ բառերն ուարտահայտությունները։

Երեխաները իրենց միջից կընտրեն կերպարներին համապասխան երեխաների, որոնք սկսեցին ներկայացնել հեքիաթը դերասանական խաղով՝ տալով կերպարներին համապատասխան ձայնային հնչերանգ։

Դերային խաղից հետո միացնում եմ տեսասահիկը, որտեղ զետեղված են նկարներ վերոհիշյալ հեքիաթի հատվածներից։ Երեխաները բաժանվում են հինգ խմբի, յուրաքանչյուր խմբում չորս հոգի։ Խումբը փնտրում և գտնում է հեքիաթում, տվյալ նկարին համապատասխան հատվածը և ընթերցում այն։

Կշռադատման փուլում օգտագործում եմ «Քառաբաժան» մեթոդը.

Ի՞նչ տեսա Ի՞նչ զգացի

Ի՞նչ լսեցի Ի՞նչ սովորեցի

<<Թե ինչպես կապիկները որոշեցինճանապարհորդել>>

Ջ.Ռոդարի

Մի օր կենդանաբանական այգու կապիկները որոշեցին ճանաչողական ճանապարհորդություն կատարել: Գնացին, գնացին, կանգ առան ու հարցրին..

-Ի՞նչ է երևում:

-Առյուծի վանդակը, փոկի ավազանն ու ընձուղտի տունը:

-Ի՜նչ մեծ է աշխարհը, ու ինչքա՜ն շատ բան ես իմանում՝ ճնապարհորդելով:

Շարունակեցին ճանապարհն ու կանգ առան միայն կեսօրին:

-Հիմա ի՞նչ է երևում:

-Ընձուղտի տունը, փոկերի ավազանն ու առյուծի վանդակը:

-Ի՜նչ տարօրինակ է աշխարհը, ու ինչքա՜ն շատ բան եսիմանում՝ ճանապարհորդելով:

Նորից ճանապարհ ընկան ու կանգ առան միայն արևամուտին:

-Իսկ հիմա, ի՞նչ է երևում:

-Առյուծի վանդակը, ընձուղտի տունն ու փոկերի ավազանը:



-Ի՜նչ ձանձրալի է աշխարհը միշտ նույն բաներն են հանդիպում. Ու ճանապարհորդելը ոչ մի բանի պետք չէ:

Ու այդպես, նրանք ճնապարհորդում էին, ճանապարհորդում, բայց վանդակից դուրս չէին գալիս՝ պտտվելով իր շրջանսյուրյանց, կարուսելի ձիուկների պես

Հեքիաթի համար մտածել եմ երկու ավարտ, որը կներկայացնեմ նաև հավելվածի տեսքով։

Ավարտ 1

Եվ ահա մի օր, նրանցից մեկը երազ տեսավ, թե ինչպես է բացվում վանդակի դռները, և նրանք հայտնվում են մի կախարդական աշխարհում, որտեղ բացի կենդանիներից կային ծառեր, թփեր, որոնք նրանց համար անծանոթ էին։ Հանդիպեցին երկու տարբեր, իրենց համար անծանոթ ծառերի, մեկը բարդի էր,մյուսը՝ կաղնի։ Նրանք միմյանց հարցնում ու զարմանքով ուսումնասիրում էին ծառերը։ Հիացած նայում էին, թե ինչպես է ճանապարհի եզրին աճում և վեր խոյանում դալար բարդին և հզոր կաղնին։ Այս երկու ծառերը իրենց գեղեցկությամբ ու հմայքով

անտարբեր չէին թողնում ոչ մի անցորդի և նույնիսկ

կենդանիների։ Զարմանքով ու հիացմունքով նայում էինբարդու կատարին բույն դրած արագիլների ընտանիքներին, որտեղից երևում էին ձագուկների գլուխները։ Բոլորի մոտ մի հարց կար, թե ինչպես էին այս երկու ծառերը դիմանում այդքան ուժգին քամիներին և անձրևներին։ Նրանք կանչեցին իրենցից ամենախելացիին և հարցրեցին, թե ինչպես է, որ այդքան ուժգին քամիները չեն տապալում ծառերին, թե ինչպես է բարդին այդքան գեղեցիկ, բարձրիկ ու սլացիկ մեջքով կանգնած մնում, իսկ կաղնին այդքան տերևախիտ է ու գեղեցիկ։ Եվ նա, ով այդքան իմաստուն և խելացի էր, ասաց. «Երբ քամի ու անձրև է լինում, բարդին իր հասակով մեկ կանգնում է քամիների առաջ և պաշտպանում իր ընկերոջը, իսկ երբ կաղնին տեսնում է ,որ ընկերը ուժասպառ է լինում, իր մեջքը դեմ է տալիս բարդու մեջքին ու իր թիկունքով պաշտպանում բարդուն կոտրվելուց։ Ահա , թե ինչպես պետք է ընկերները իրար պաշտպանեն»։

Այս խելացի պատասխանը լսելուց հետո բոլորը գոհունակությամբ նայեցին իրար և նստելով կաղնու հովին՝ հանգստացան։ Կապիկը արթնանալով երազից, մտածեց, որ ճաղերից այն կողմ կա մի ուրիշ, շատ գեղեցիկ աշխարհ ու բացականչեց, թե ինչ գեղեցիկ է

աշխարհը և որոշեց փախչել վանդակից։

Ավարտ 2

Եվ ահա մի օր, նրանց ից մեկը երազ տեսավ թե ինչպես է բացվում վանդակի դռները և նրանք հայտնվում են մի կախարդական աշխարհում։ Նրանց շատ անծանոթ աշխարհ էր, մի անծայրածիր հեքիաթային աշխարհ։ Փորձեցին քայլել այդ աշխարհում, զգացին սառնություն և խոնավություն, իրենց անծանոթ զգացողություններով պատվեցին։Հայտնվելով ջրի հատակին, նրանց շատ գեղեցիկ թվաց այդ ամենը, տեսան տարբեր ձկներ, գույնզգույն խոտեր և ծաղիկներ։ Այդ հրաշքի մեջ նրանք հանդիպեցին մի մեծ ձկան, որը բավականին մեծ էր

ու ահռելի չափերի էր հասնում։ Կետի հետ շփվելով,

հասկացան, որ անվնաս կենդանի է ու բարի։ Ծովի խորքում հանկարծ անհասկանալի երևույթներ տեղի ունեցան ձկները այս ու այն կողմ էին լողում։ Զարմացած կապիկները հանկարծ տեսան շնաձկանըև հասկացան, որ դա շատ վտանգավոր է իրենց համար։ Փորձում էին լողալով փախչել, ջրից դուրս գալ, բայց չէին կարողանում։ Լողում ու լողում էին, բայց չէին հասնում ցամաքին։ Այդ ընթացում զգացին, որ իրենք նստած են մի ուրիշ շատ բարի ձկան քթի վրա։ Այդ բարի ձուկը դելֆին էր։ Դելֆինը նրանց դուրս բերեց ափ։ Կապիկները մազապուրծ փախան և մտան իրենց վանդակները։ Վերջապես նրանք հասկացան, որ << իրենց տնից լավ տեղ չկա աշխարհում>>։ Բացելով աչքերը հասկացան, որ դա երազ էր։Ճիշտ է՝ աշխարհը գեղեցիկ է ու չքնաղ, բայց այնուամենայնիվ, իրենց տունը հոգեհարազատ է և ամենալավ բնակավայրն է։ Եվ ապրեցին վանդակում զոհ և երջանիկ, դրսի աշխարհի մասին պատկերացումներով։

Հարցեր.

1.Քանի՞ հոգուց է բաղկացած ձեր ընտանիքը։2.Սիրու՞մ եք հյուր գնալ։
3.Սիրում եք այն տունը որտեղ ապրում եք։

4.Ինչ կենդանիների հետ ծանոթացանք

Երջանիկ է այն մարդը , ով երջանիկ ապրում է իր տանը

Եզրակացություն

Այսպիսով հեքիաթն ունի դաստիարակչական բնույթ, բարոյական կարևոր արժեքներ, որն արտահայտում է հերոսների արարքները Հեքիաթը միաժամանակ ստեղծագործական ունակությունների բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոցէ Հեքիաթների նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական ունակությունները Հեքիաթները ընդլայնում են երեխաների բառապաշարը, օգնում են ճիշտ խոսք կազմել Իմ աշխատանքում կատարել եմ հետազոտություն , արդյունքները ցույց են տվել, որ հեքիաթի միջոցով զարգանում է երեխաների ստեղծագործական

ունակությունները, հմտությունները, զարգանում է նրանց բառապաշարը Հեքիաթների միջոցով երեխաների մեջ դաստիարակում ենք կապակցված խոսք ստեղծելու կարողությունները Հեքիաթներում երեխաները տեսնում ու լսում են չարի ու բարու , պայքարի հաղթանակի մասին, տարբերում են լավն ու վատը, գեղեցիկն ու տգեղը Հենց այստեղ էլ ձևավորվում են նրա հայացքները ամենինչի հանդեպ Մեզ բոլորիս

ուղեկցում են հեքիաթները, կարդում ենք վերլուծում

ենք, հետո էլ հերոսներին։Հեքիաթը ժողովրդական բանահյուսության տեսակներից է, որը եղել է բանավոր, հետո մշակվել է։Կյանքում ինչ-որ անհնար է եղել տեսնել, մարդիկ ցանկացել են տեսնել հեքիաթներում։Մեր մանկության հուշերը կապված են հեքիաթների հետ, որոնք մենք լսել ենք մեր ծնողներից, մեր տատիկներից ու պապիկներից։ Մեր նպատակն է հեքիաթի միջոցով պահպանել ազգային ծեսերը, պահպանել մեր մշակույթը և մեր տատիկների հին ավանդույթները փոխանցել սերնդե- սերունդ։Այս բոլորը կարող ենք փոխանցել երգերի, խաղերի, դերային խաղերի միջոցով։

Հեքիաթը դառնում է կապող օղակ տատիկների, ուսուցիչների ու աշակերտների միջև։

<<Ծաղկունք բաց դպրոց>> հիմնադրամի <<Հազար ու մի հեքիաթի>> շրջանակում շաբաթը երկու անգամ անցկացնում ենք հեքիաթի ուսուցում, որտեղ հեքիաթները ընթերցում են տատիկները։

Աշխատում ենք պահպանել գյուղի բնակիչների հինավանդույթները ու ծեսերը։

Օգտագործված գրականություն

- Գյուլամիրյան <<Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա>>

- Ազիզբեկյան հեքիաթի ժանրի որոշ առանձնահատկություններ